

քան տարածուելուն պատճառը ճիշտ այն յատկութիւնն է զոր ունին Յոյներն ուրիշ ազգի լեզուն չսորվելու՝ իրենց ազգային լեզունն առաջ և աւելի :

Յօդուածիս նախորդ մասին մէջ բացատրեցինք թէ ինչպէս Յոյներն իրենց գրին ու գրականութեան շնորհիւ շուտով զարգացան ու լեզունին ալ պարտադրած են իրենց տիրապետութեան առկա մնացած Հայաստանի մասին վրայ, ինչպէս նաեւ ուրիշ զանազան ազգաց ալ, զորս իրենց մէջ հալեցուցեր են : Հին պատմութիւնը Յունաց երեւելիներուն մէջ բնաւ չի յիշատակեր մէկը որ օտար լեզու մը ուսած ըլլայ բացի թէ միաստիկէսէն, որ բակտրէն գիտէ եղեր :

Բիւզանդեան Կայսրութեան կործանման ատեն, Յունաց ուսումնական դասը Եւրոպա պատասանեցաւ ու հոն ջանաց Յունարէն լեզուն տարածելու, ինչ որ բաւական յանդուգն ձեռնարկ մըն էր : Յաջողեցաւ սակայն : Լատիներէնին հետ Յունարէն լեզուն ալ անհրաժեշտ պէտք մը նկատուեցաւ զպրոցներուն համար, որպէս զի աշակերտք անով աւելի լաւ հմտանան իրենց մասին լեզունն ու գրական ճաշակին մաքրութիւնն ունցնելու արտապահական հեղինակութիւններուն ընթերցմամբ : Այս վիճակն այնքան հաստատուն արմատ ձգած է այդ երկիրներուն մէջ որ Յունարէն լեզուի ուսուցման լուծը բոլորովին թօթափելու համար մինչև այսօր եղած ջանքերն ապարդիւն մնացած են :

Մենք ալ ուրեմն սիրենք մեր լեզունն ու սովորեցնենք մեր զաւակներուն գոնէ անձնապատուութեան (amour-propre) ինքիւր համարելով : Ազգերն ալ անհատներուն պէս են : Ինչպէս որ իր պատուոյն նախանձախնդրութիւն չունցող անհատն անարդէ ու վատագի կ'նկատուի և ո՛ր և է յարգանքի անարժան կ'անդիտանայ, այնպէս են և ազգերը : Մտածեցէք անգամ մը թէ ի՞նչ ազեղ երեւոյթ է յայս օտարին, երբ մէկ քանի Հայեր տեղ մը հաւաքուած իրենց մայրենի լեզունն տարբեր լեզուով մը կ'տեսակցին իրարու հետ, քան մը որ երբեք չի պատահիր ուրիշ ազգերու մէջ :

Այս կէտերը դեռ ըրտնելու անընդունակ ժողովուրդի մը վիճակն իրօք յուսահատական կ'ըլլայ չեթէ չշարժմանուի :

Մենք մեր լեզունն ուրիշ ազգերու, սովորեցնելու վիճակին մէջ չենք, այս յաւակնութիւնը շատ հեռու է մենէ : քանի որ նախ մենք պէտք ունինք սովորելու, բայց գոնէ արժանապատուութեան զգացումով ու ծիծաղելի ըլլալու երկիւղով մեր լեզունն մեր մէջը տարածելու ջանք չիմայանք : Սովորենք ու սովորեցնենք մեր մայրենի լեզունն այնքան խնամով, որքան կարելի է, չլքանելով նաև գրաբարը, այն ձոխ ու հարուստ աղբիւրն որ Ս. Սահակայ, Ս. Մեսրոպի և Թարգմանչաց աւանակիտ լեզուններէն կ'ըլլին :

Մաղթենք ուրեմն որ այս Մեծ Յորհիւեանին, մեծաշուք հանդէսներն այսպիսի զգացումներով տոգորեն մեր սրտերն ու մտքերը, և բարեբաստիկ թուական մը բանալով զժբախտ Հայութեան առջև, առաջնորդեն անոր դողդոջ քայլերը ղէպի ճշմարիտ ազգասիրութիւն և ի կատարեալ գիտակցութիւն իսկական կարեւոր ազգիս Հայոց, Ամէն :

Վ. Ս. Ր. Գ. 26 ՄԱՅ

ՄԵՇ ՅՈՐԷԼԵԱՆՆ Ի ՃԻՊՈՒԹԻ

ՃԻՊՈՒԹԻ, 28 Հոկտ.

Հոկտ. 26ին Որբերեան նորաչէն վաճառատան սրահին մէջ տեղի ունեցաւ մեծ յորելեանին հանդէսը : Ընկալութիւն կառավարիչ Մ. Պոնհուր պաշտօնական համագլխատով կ'նախագահէր հանդէսին, զոր Տիգրան Գոյեան բացաւ Բեթ շուրու երգն որոտալով իր բաժը ձայնով և Տիկին Գուվիի ղաշնակի ընկերակցութեամբ : Վերջը, Որբերեան երկար ճառով մը ոգեկոյնց անցեալին յիշատակները, լացաւ ու լացուց արտասանելով Ֆրանսերէն Միլաներուն երկրորդ հատո-

րին Մեշ ցեղը խորագրով ոտանաւորը : Կրկնուած ծափերով Ֆրանսական դատութիւնը պատուեց սգաւոր Հայաստանը : Տիգրան Գոյեան արտասանեց Օր. Հէրմի-նէ Հովեանի հիմնալի Les vierges de Missisip, Պ. Հայկ Բաթաբանեան շատ գեղեցիկ խօսքերով շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն և արտասանեց Տիգրան Երկաթի Le poète mourant : Հանդէսը փակեց Ֆրանսական Սօմալի-լանտի համակրելի և հայրախնամ կառավարիչ Մ. Պոնհուր, որուն գեղեցիկ ճառին ամփոփումն աւասիկ :

Մ. Պոնհուր իր ճառին սկիզբն բաւ թէ այն ժողովուրդն որ կ'մտնայ իր անցեալն և անհետացած սերունդներուն մատուցած ծառայութիւնները, կ'զատապարտուի արագ անկումի : Նետեալքար Մ. Պոնհուր շնորհաւորեց հանդէսին կազմակերպիչներն որ ուզեցին շնորհապարտութեան հարկ մը մատուցանել : ու իրը Ֆրանսայի ներկայացուցիչ, շնորհակալութիւն յայտնեց հանդէսին կազմակերպիչներուն՝ ձիպութի ընկող թղթը Ֆրանսացիներուն հրաւերուողով ըլլալուն համար : Յետոյ ճառահարսը վերուծեց Հայ գաղութին նախադրած Տիար Որբերեանի արտասանած ճառը, և աւելէ քաղց հետեւեալ զար. Մենք պարտական ենք անոնց որ մնցմէ պարտաւոր ենք արտարար շատուցանելու միակ միջոցն է մեր տրամադրած թղթը միջոցներով զանալ լուսադոյն ընծայել ապագան անոնց որ պիտի ընեն մեր տեղը : Այս առթիւ յիշեց հոռմական պատմութիւնը, ու ասիկա իրեն առիթ մը եղաւ ողջունելու անցեալն հնարիչները, Ֆարգերին չճանաչուած կամ անտեսուած, անարգուած կամ հալածուած, անոնց է որ, գոչեց Մ. Պոնհուր, մասամբ կ'պարտինք մտաւորական վայելքները, ինչպէս այսօրուանը, Անոնց տաճանագին աշխատութենէն է որ կ'օգտուինք, անոնց փորձերն տաճանայից ախօր, անոնց ցանցիկն ցաւով, մենք կ'հնձենք խաղաղօրէն : Մ. Պոնհուր ի վերջոյ պարզեց թէ Ֆրանսա ունեցաւ պատմութիւն որ իւրաքանչիւր ժողովուրդը օգտու քաղէ մարդկային սեռին պատկանող այն հունձընէ, նոյնքան ազատօրէն, որքան ինքը, Ֆրանսան : Գուր, ուրեմն, պարտենք, ըսաւ Մ. Պոնհուր, զորս կեանքի պատահարները հեռացուցած են մեր հայրենակիցներէն ու մեր կրօնակիցներէն, ըսէր անոց մեր կողմէ, ըսէր մեր ընկերներէն անոնց որ մնացած են Հնդկ Հայաստանի հողին վրայ, և որոնց սրտազոհներն ու վերդովուծները, աւա՛ղ, շատ անգամ արդարացի են, ըսէ՛ր անոնց որ Ֆրանսա լոկ հայրենիքը չէ Վոլթէնի եւ Վիթթոն Իւկոյի, այլ նաև երկիրն ամենամարտը խանդավառութիւններով, երկիրը, որուն վրէժխնդիր անունը կ'կոչուին երբեմն ոգեւար ազգութիւնները, աղաղակելով : Աստուած շատ վերն է, և Ֆրանսա շատ հեռուն : Ըսէր անոնց մասնաւոր, ու ասիկա իմ վերջին բառս է, ըսէ՛ր անոնց թէ Ֆրանսայի հողին այնքան բարձր է որ հակառակ քաղաքական պատահարներու, շահակրկիտ ցանկութիւններու եւ օգտակարախնդիր հաշիւներու, երբեք չի հրաժարիր իր անաղական առաքելութենէն, նուիրական առաքելութենէն որ է Սիրելի ու Պաշտպանել, տարածելով հեռուները՝ ձշմարտութիւնն ու Բարութիւնը :

Ուրիշ տեղեր չեմ գիտար ի՞նչ ըրին : Այստեղ մեր հանդէսն աստուածացումի մը պէս եղաւ : Մ. Կաթողիկոսին ալ հետեւեալը հեռագրեցինք :

ՃԻՊՈՒԹԻ Կայսրութիւնը ջերմօրէն էր ճանաչելի ինչ մանչից ինչ յարգելիքն է : Մ. Սահակ Պրեմիէն ըսէր ինչպէս չի լինար ինչպէս չի լինար :

ԱՅՈՒՐ

ԿՐԹԱՎԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՌՃԱՄԵԱՅ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՆԱԽԱՎԱՆ ՈՒՍՄԱՆ

Գ. ԳՂՈՒՄ

ՈՒՍՈՒՑԱՎԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Ուսուցչուհի Վարդի, ուսուցչուհի, ուսուցչուհի, ուսուցչուհի, ուսուցչուհի, ուսուցչուհի, ուսուցչուհի, ուսուցչուհի :

Յօդ. 41. — Հանր. նախնական վարժարաններու ուսուցիչները, նահանգին կրթական տնօրէնին առաջարկով, կուսակալին կողմէ կ'անուանուին, պաշտօնանկ կ'ըլլան և կամ կ'տեղափոխուին :

Յօդ. 42. — Նախնական բոլոր վարժարաններու ուսուցիչներն երկու դասակարգի բաժնուած են. — Օգնական-ուսուցիչ և ուսուցիչ : Օգնական-ուսուցիչ ըլլալու համար պէտք է ուսուցչական առժամայ վկայագիր մը ունենալ, իսկ ուսուցչութեան համար ալ վարժապետանոցի նախնական ճիւղէն վկայեալ ըլլալու է :